ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոս Ամենայն Հայոց սիրով ընդունելով եղբայրական հրավերը Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ի, սույն տարվա փետրվարի 16—21-ը պաշտոնական այցելություն տվեց Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսին և Վրաստանի հայոց թեմին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով և ուղեկցությամբ Նորին Սրբություն Եփրեմ Կաթողիկոսի և Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսի, Թբիլիսիում այցելեց Սիոնի վրացական Մայր Եկեղեցին, ինչպես նաև Մցխեթայի և Ջվարիի պատմական վանքերը:

Վեհափառ Հայրապետը կիրակի, փետրվարի 18-ին, հանդիսավոր պատարագ մատուցեց և քարոզեց հայոց առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցում, խոտեռամ հավատացյալների ներկայությամբ: Սուրբ պատարագին ներկա էր նաև Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսը Իր շքախմբով:

Փետրվարի 20-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահեց ժամերգության Հավլաբար հայկական թաղի Ս. Էջմիածնեցվոց եկեղեցում և քարոզեց ի ներկայության հոծ ու խանդավառ բազմության:

Նույն օրը, հետմիջօրեին, Նորին Ս. Օծությունը այցելեց Թբիլիսիի հայ նշանավոր գրական և հասարակական գործիչների պանթեոնը և նախագահեց Հոգեհանգստյան արարողության: Հոգեհանգստյանը ներկա էին Թբիլիսիի հայ մտավորականության և հայ հասարակության ներկայացուցիչներ:

Փետրվարի 20-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը և Եփրեմ Կաթողիկոսը, ուղեկցությամբ պետական իշխանության ներկայացուցիչների, այցելեցին Ռուսթավի հուշարձանի քարակառույց քաղաքը և դիտեցին տեղի մետաղաձուլական մեծ գործարանը:

Փետրվարի 19-ին, Նորին Վեհափառությունը, ուղեկցությամբ Եփրեմ Բ Կաթողիկոսի և Իր շքախմբի, այցելեց Վրաստանի Հանրապետության Մինիստրների Սովետի նախագահ Նորին Գերազանցություն Գ. Ջավախիշվիլուն: Նորին Սրբության և մեծարգո Վարչապետի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց՝ կես ժամ տևողությամբ:

Ի պատիվ Նորին Ս. Օծության, Վրաց Պատրիարքարանի դահլիճում տրվեց մեծ ճաշկերույթ, որին ներկա էին պետական իշխանության ներկայացուցիչներ և վրացի և Թբիլիսիի հայ մտավորականներ:

Փետրվարի 22-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ